Հերաս հանդարտագոյն հնչէ յերկնամիջակ կիտին, և Հեփեստոս ոչ զաւրանա ի ժամադիտակին յաւէտ։ Սակս որո սերմանեալքն ի նմա բիւրապատիկ արդիւնանան. և ճարակեալ խաշանց և անդէոց և գիրացեալ ստուարանան. զի որ բուծցէ անդ երինջ մի յարջառոց կամ մաքիս երկուս, ըստ տեսանողին բանի, ի յորդութենէ կըթին կերիցէ իւղ. զի իւղ և մեղր կերիցեն ամենայն բնակեալքն ի նմա։

Եւ լերինք լի են եղջերուաւք, և վեմքն նապաստակաւք, և ընդ մէջ նորա գնան ջուրք. յոլով են ծառք և մայրք ձագանունդ թռչնոց՝ և բոյնք տառեղանց՝ ապաւէն նոցա։ Այլ և համահաւասարէ Ադենա, դրաստին Արամազդա՝ և դաշտին Նլեսինա։ Քանզի վայր է փափկութեան ըստ աւրինադրին երգոյ. և ի սմանէ բըղխէն երկու ակունք Տիգրիս և Եփրատէս, որպէս Յորդ և Դան՝ ի Սանիրա և յԱհերմոնէ. և յառաջ խաղալով՝ աւձաձև գալարմամբ, վէտ ի վէտ և պատ ի պատ [թղ. 10բ] ճաւճին ճեմին ծիծաղին ծաւալին պատառելով զլերինս և հատանելով զդաշտս. և պար առեալ պատեն զԱսորիս, միաւորեալ ի Տեսբոն. ծնանի արս դիւցազունս, քաջս և կորովիս, մենամարտիկս անվանելիս։ Հանէ հաց սրտապինդ և զինի ուրախարար, ևս և